

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը Վերջին զանգի առթիվ

25.05.2012

Միբելի շրջանավարտներ,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ մայիսյան այս գեղեցիկ և բոլորիդ համար շատ հիշարժան օրվա՝ Վերջին զանգի առթիվ:

Դպրոցական ուսումնառության ավարտը խորհրդանշող այս օրն ազդարարում է Ձեր մուտքը դեպի մեծ կյանք՝ լի նորանոր բացահայտումներով ու նվաճումներով:

Համոզված եմ, որ այս տարիներին ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կօգնեն Ձեզ ճիշտ ճանապարհ ընտրել կյանքում և պատվով անցնել այն՝ արդարացնելով Ձեր ծնողների և ուսուցիչների ակնկալիքները:

Լինելով Հայաստանի անկախ հանրապետության սերունդ՝ դուք կյանք եք մտնում մեր նորօրյա պատմության հերոսական դրվագներով դաստիարակված, առավել ազատ ու անկաշկանդ մտածողությամբ և հաջողությունների հասնելու մեծ վճռականությամբ: Եվ ես վստահ եմ՝ դուք դառնալու եք մեր պետության արժանավոր զավակները, մեր երիտասարդ ժողովրդավարության շարժիչ ուժը:

Միբելի շրջանավարտներ,

Կրկին շնորհավորելով Ձեզ, Ձեր ծնողներին և ուսուցիչներին այս հանդիսավոր օրվա առթիվ՝ մաղթում եմ հաջողություններ բոլոր բարի ու նվիրական նախաձեռնություններում:

Բարի երթ դեպի նոր կյանք:

Լավագույն ցանկություններով
ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյան